

**ԳՈՅԱԿԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԻՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

**Ա. Թ. ՍԽՐՈՆՅԱՆ**

1604 թվականին Իրանի շահ Աբբաս արքան կազմակերպեց Հայաստանի բնակչության բռնագաղթ: Այդ իրադարձության հետևանքով Իրանի տարբեր շրջաններում ու քաղաքներում հայ ազգաբնակչության բնեռացում գոյացավ:

Կենտրոնական Իրանի Փերիա, Չարմհայ, Բուրվարի, Գափիա, Քյամարա, Քյազազ, Ղարաղան և այլ շրջանների ձևավորումը ավանդաբար այդ նույն բռնագաղթին է վերագրվում:

Նոր Ջուղաշից բացի, մինչ այժմ ուսումնասիրվել է միայն Չարմհայի խոսվածքն ու ազգագրությունը:

Ստորև ներկայացվող նյութը Կենտրոնական Իրանի Բուրվարի, Գափիա, Քյամարա և Քյազազ գավառների խոսվածքներում գոյական անվան առանձնահատկությունների քնննությանն է նվիրված: Բարբառն աչքի է ընկնում հոլովման համակարգի քառանդամությամբ, որը պայմանավորված է ներգոյական հոլովի բացակայությամբ:

**Հոգնակի կազմությունը**

Խոսվածքներում հոգնակի թիվը կազմվում է ե. ներ, ան, ք, անք. ենք մասնիկներով: Միավանկ բառերի հոգնակին կազմվում է եր մասնիկով, ինչպես, արտ>արտ-արտեր, բան>բ'ան-բ'աներ, խոտ>խոտ-խոտեր, ձու>ձ'ու-ձըվեր, ծով>ծով-ծովեր, կով>կով-կովեր:

Մի շարք բառերում հին հայերենի թ վերջահնչյունը ընկել է, բայց հոգնակի կազմության մեջ կարող է վերականգնվել, ինչպես՝ բեռն>բ'եռ-բեռներ, գառն>գ'առ-գ'առներ, դռն>դ'ոռ-դրոներ, հարսն>հառս/խառս-հառսներ/խառսներ, թրոն>թ'ոռ-թ'ոռներ, ձեռն>ձ'եռ-ձ'եռներ:

Սառ բառը գրաբարում և վերջավորություն չի ունեցել, բայց հոգնակին կազմվում է վերոհիշյալ ձևով՝ ծառներ:

Մարդ բառի հոգնակին կազմվում է ինչպես գրաբարում՝ մարդ>մարդ-մարդիք (գրաբ. մարդիկ):

Մի քանի միավանկ բառերի հոգնակին կազմվում է ան մասնիկով, ինչպես՝ այծ>էծ-իծան, գայլ>գ'լե-գ'լիան, էշ>էշ-իշան, ձի>ձ'ի-ձ'իան:

Բաղաձայնով վերջավորվող բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է ներ մասնիկով, ինչպես՝ ալեոր>հայիվոր/խալիվոր-հայիվորներ/խալիվորներ, անոն>անում-անըմներ, բերան>բ'երան-բ'երըններ, գերան>գ'լերան-գ'լերըններ, թոնիր>թունդիր-թունդրոներ, թագաոր>դաքավոր-դաքավորներ և այլն:

Խոսվածքների ու ձայնավորով վերջացող բառերի հոգնակին կազմվում է նույնպես ներ մասնիկով՝ ու>վ հնչյունափոխությամբ. օրինակ՝ լեզու>լիզու-լիզվոներ, առու>առու-հառու-առվոներ/հառվոներ, կատու>կատու-կատվոներ և այլն:

Տիրացու բառի հոգնակին կազմվում է ք մասնիկով:

Ա ձայնավորով վերջացող բառերի հոգնակին կազմվում է ք մասնիկով. այդ դեպքում բառավերջի ա-ն վերածվում է է-ի՝ երևան հանելով այք>էք տարածված հընչյունափոխությունը, ինչպես՝ ճամփայ>ճամփա, ճամփայք>ճամփէք, սատանայ>սատանա, սատանայք>սատանէք, փեսայ>փեսա, փեսայք>փեսէք:

Տղայ>տղա բառի հոգնակին կազմվում է տղէք ձևով. աղջիկ>ախչիկ բառինը՝ ախչիկներ ձևով (սա զուգամն ունի՝ ախչլտիք):

Տի անանգով վերջավորվող բառերի հոգնակին ևս կազմվում է ք-ով, ինչպես՝ քախ-

**կըծիք, գ'ըռէղէցիք, բորվարցիք, քյազագցիք, գափլէցիք, քյամարէցիք, փերէցիք փերէցիք:**

**Ի** ձայնավորով վերջացող բառերի հոգնակին կազմվում է վերոհիշյալ ձևով՝ **խնամի > խընամիք, ոսկի > վոսկիք. որդի > վոհոթիք, քննի > քյննիք, քնոի > քյնոիք** և այլն:

Խոսվածքներում մասնակի գործածություն ունեն հետևյալ մասնիկները, որոնք արտահատում են հավաքական իմաստ. սրանցով կազմված ձևերը ունեն նաև երկամասնական մասնիկներով հոգնակի (ինհարկե սակավ, քան նախորդները):

**օրանք-այստեղ > ըստեղ/ըստի-ըստեղորանք/ըստօրանք**

**այդտեղ > ըտեղ/ըտի-ըտեղորանք/ըտօրանք**

**ալնտեղ > ընդեղ/ընդի-ընդեղորանք/ընդօրանք**

Բորվարու և Գափլայի տարածքում՝

**(տ)իք(ան)իք— կին > կընիկ-կընանիք, աղջիկ > ախշիկ-ախշըտիք,**

**թիք— աման > աման, ամընթիք,**

Քյազագի և Քյամարաի տարածքում՝

**թիք— կին > կընիկ-կընթիք,**

**իք— աղջիկ > ախշիկ-ախշըկյիք:**

Խոսվածքներում որպես հոգնակերտ են հանդես գալիս նաև **անք, ենք, ոնք** մասնիկները: Դրանք կազմում են անեզական բառեր: Ավելի գործածական է **ենք** մասնիկը: **Ենք** մասնիկով անեզական գոյականներ են կազմվում անձերի հատուկ և հասարակ անուններից. ինչպես՝

**ա) Ծատուրենք, Մաթօսենք, Նիկօղօսենք, Հարութունենք** և այլն:

Սրանք գերդաստան են ցույց տալիս:

**բ) հերանք, տերտերանք, քավորանք, անէրանք, կլէրանք:**

**Ոնք** մասնիկով անեզական գոյականներ են կազմվում անձերի հասարակ անուններից, ինչպես նաև դերանունների սեռական հոլովածներից, օրինակներ՝

**ա) խնամոնք, քյեռոնք, պապոնք, մամոնք:**

**բ) իմոնք, քունոնք, ձերոնք:**

Երբ բառը վերջավորվում է **գ. կ, ք** ետնալեզվաին պայթյալանցներով և հոգնակի կազմության ժամանակ ստանում է երկ մասնիկը, ե-ի ազդեցության տակ **գ, կ, ք** հնչյունները դառնում են **գյ, կյ, քյ** քմային պայթյալանցներ, ինչպես՝ **հալգյեր, ծակեր, ձ'աքյեր** և այլն:

Հոգնակի կազմության ժամանակ հնչյունափոխությունը կատարվում է մոտավորապես գրականի նման, այսինքն փակ վանկի ի և ա ձայնավորները սովորաբար վերածվում են ը-ի, ինչպես՝ բորդ > բ'որթ-բ'ըթեր, գին > գ'ին-գ'ըներ, թիզ > թիզ-թըզեր և այլն:

Հոգնակի կազմության ժամանակ է ձայնավորը հնչյունափոխվում է ի-ի հետևյալ բառերի մեջ. **այծ > էծ-իծան, գայլ > գ'յլ-գյլան, էշ > էշ-իշան:**

Միավանկ բառերի հոգնակի ձևերում մյուս ձայնավորները չեն հնչյունափոխվում. օրինակ՝ **քան > ք'ան-ք'աներ, գող > գ'ող-գ'ողեր, գորք > գորք-գորքեր** և այլն:

Ի տարբերություն գրական հայերենի, բարբառի բազմավանկ բառերի հոգնակի կազմության ժամանակ տեղի է ունենում հնչյունափոխություն. օրինակներ՝ **աղբիր > ախպոր-ախպրըներ, արմուկ > արմոգ-արմընգներ, գլուխ > գ'ըլօխ-գըլլըներ, գոմէշ > գ'օմէշ-գ'օմըշներ, եղունգ > ըղունգ-ըղընգներ, կրունկ > կըրունգ-կըրընգներ, պուտուկ > պըտուկ-պըտկըներ, բանալի > բ'ալնիք-բ'ալընքներ, իլիկ > իլիկ-իլկըներ, շապիկ > շափիք-շափընքներ, վառեակ > վառէկ-վառկըներ, ստամ > ստամ-ատըմներ, պառաւ > պառավ-պառվըներ** և այլն:

### **Հոլովները և նրանց կազմությունը**

Խոսվածքներում ժամանակակից արևելահայ գրական լեզվի նման հայցականը ձևաբանորեն չի տարբերվում ուղղականից և տրականից, ինչպես և սեռականը՝ տրականից:

Բարբառում, ի տարբերություն ումնյուղի մնացած բոլոր բարբառների, չկա ում-ով վերջավորվող ներգոյական հոլովը. նախադասության մեջ այդ իմաստով գործածվում է ուղղականը. ինչպես՝ **Թէրանք քօլ մառթ կա. գյալլէն կյիտէցին գ'յնէղի մէղդանը.** և այլն:

Ուղղականը բառի ուղիղ ձևն է՝ հոլովական գրո վերջավորությամբ. ինչպես՝ **մէ շուն վազգեց, մէ էրէխա լաց էլալ** և այլն:

Տրական հոլովը կազմվում է ի. ու, վա և այլ թեքություններով. ինչպես՝ **քարի, քամու, օրվա** և այլն: Որպես վերադիր (հատկացուցիչ) տրականը, ինչպես ժամանակակից գրական հայերենում է, միշտ գործածվում է առանց որոշիչ հոդի. օրինակ՝ **էրէխու վոտը, քամու գորութունը** և այլն:

Խոսվածքներում դրսևորվում է իրի և անձի առում: Իրի առման դեպքում ուղիղ խնդիրը դրվում է ուղղականով. օրինակ՝ **էն (և) հավը պիտի ծախես. կօվը մօթէցի- շունը կապէցի** և այլն:

Աճճի ամճան դեպքում ուղիղ խճդիրը դրվում է տրականով, օրինակ՝ **Էճ Բավիճ/խավիճ պիտի ծախեմ. կօվիճ ժօթեցի. շանը կապեցի** և այլն:

Բացառական հոլովը կազմվում է ից/ուց վերջավորություններով, ինչպես՝ **սարից, քարից, վոսկուց, գարուց** և այլն:

Ժամանակ նշանակող բառերի բացառականը կազմվում է նաև է վերջավորությամբ-օրինակ՝ **օրվաճէ, ժամվաճէ, էքվաճէ, էրեգվաճէ, իրիգվաճէ** և այլն (հավասարապես գործածական են նաև ա>ը հնչյունափոխ ձևերով):

Գործիական հոլովը կազմվում է -օվ վերջավորությամբ. օրինակ՝ **սարօվ, քարօվ** և այլն: Խոսվածքներում որոշյալ ամճան դեպքում որոշիչ հոդ են ստանում ուղղականը և տրականը հաճախ, իսկ բացառականն ու գործիականը՝ ոչ. օրինակ՝ **սարը, սարին, սարից, սարօվ. քարը, քարին, քարօվ:**

Որոշ բառերի ուղղականը գործածվում է նաև որպես կոչական, բայց հաճախակի գործածություն ունեցող գոյականների մի մասն ունի կոչականի առանձին ձև. ինչպես ուղղ-**բար** («հայր»), կոչական՝ **բարի**(հուրվարի)/**բարա**(Քյազազ), **նաև**(«մայր»), **նանի**(հուրվ.), **նանա**(Քյազ.), **դադ**(հուրվ.)/**տատ**(Քյազ.) («մեծ քույր»), համապատասխանաբար՝ **դադի** եւ **տատա** և այլն:

Իզական թե արական բոլոր հատուկ անուններից ուղ մասնիկով կարելի է կերտել համառոտ տարբերակներ: Եթե այս ձևով անվանում են հասուն կամ տարեց մարդուն, արհամարհական, ծաղրական վերաբերմունք են արտահայտում: Երևույթը լայնորեն տարածված է հուրվարի և Գափյա գավառների բոլոր գյուղերում. օրինակ՝ **Ռաթվիս-Ռաթուլ, Սարգիս-Սաջուլ/Սարջուլ, Աղեքսանդր-Աղուլ, Վաղարշակ-Բաղուլ, Բնօշ-Բընուլ, Նըվաթ-Նըվուլ** և այլն:

### ՀՈՒՈՎՈՒՄ

Հոլովումները որոշվում են տրական հոլովի ձևի հիման վրա: Բարբառն ունի ութ հոլովում:

### Առաջին հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են՝ տրական -ի, բացառական -ից, գործիական -օվ. օրինակ՝

	եզակի			հոգնակի	
ուղղ.	սար	օխչար	սարեր	օխչըրներ	
տր.	սարի	օխչըրի	սարերի	օխչըրների	
բաց.	սարից	օխչըրից	սարերից	օխչըրներից	
գործ.	սարօվ	օխչըրօվ	սարերօվ	օխչըրներօվ	

Այս հոլովումը տարածված և ընդգրկում հոլովում է. խոսվածքներում գոյականների մեծ մասը այս հոլովման է պատկանում: Ի հոլովումը հոգնակի թվում ավելի ընդգրկում է:

Այս հոլովման ժամանակ բառավերջի ա ձայնավորը թեք հոլովներում ընկնում է. ինչպես՝ **ճամփա>ճամփա-ճամփի-ճամփից-ճամփօվ, սատանա>սատանա-սատանի-սատանից-սատանօվ** և այլն:

Ի հոլովման են պատկանում ութին>ութուն վերջավորվող բառերը. ինչպես՝ **լավութուն-լավութունի-լավութունից-լավութունօվ:**

Այս հոլովման են պատկանում նաև ու-ով վերջավորվող բառերը. ինչպես՝

իզու	(հ)առու	իզվըներ	(հ)առվըներ
իզվի	(հ)առվի	իզվըների	(հ)առվըների
իզվից	(հ)առվից	իզվըներից	(հ)առվըներից
իզվօվ	(հ)առվօվ	իզվըներօվ	(հ)առվըներօվ

Ինչպես նկատվում է. ու վերջնահնչյունը թեք հոլովներում հնչյունափոխվում է վ-ի:

### Երկրորդ հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են՝ տր. -ու, բաց. -ուց, գործ. -օվ:

Այս հոլովման են պատկանում՝

ա) Ի ձայնավորով վերջավորվող բոլոր բառերը. ինչպես **գարի-գարու, գինի-գինու,**

**խըճամի-խըճամու, ջօրի-ջօրու, քամի-քամու, սամի-սամու, քախկըցի-քախկըցու, Բուրվարի-Բուրվարու և այլն:**

ուղղ.	ձ'ի	խնամի	բուրվարցի	քամի
տր.	ձ'իու	խնամու	բուրվարցու	քամու
բաց.	ձ'իուց	խնամուց	բուրվարցուց	քամուց
գործ.	ձ'իով	խնամով	բուրվարցով	քամով

**ք) բուրբ անորոշ դերբայները. ինչպես՝**

ուղղ.	ուտել	ասել	աղալ	խօսալ
տր.	ուտելու	ասելու	աղալու	խօսալու
բաց.	ուտելուց	ասելուց	աղալուց	խօսալուց
գործ.	ուտելով	ասելով	աղալով	խօսալով

**գ) Երեխայ բառը՝ երեխայ > էրէխա-էրէխու-էրէխուց-էրէխով:**

**դ) Տեղանունները, ինչպես՝ Թէրան, Ըսպըհան, Քյազազ, Ղարաքյարիզ, Գափլա, Ամմիրկա, Պառսկաստան և այլն:**

ուղղ.	Թէրան	Բորք	Պառսկաստան	Գափլա
տր.	Թէրանու	Բորքու	Պառսկաստանու	Գափլու
բաց.	Թէրանուց	Բորքուց	Պառսկաստանուց	Գափլուց
գործ.	Թէրանով	Բորքով	Պառսկաստանով	Գափլով

### Երրորդ հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են՝ տր. -վա, բաց. վանից, վանէ. գործ. -վանով: Հոլովման պատկերը հետևյալն է.

ուղղ.	օր	ամառ	իրիզուն	շափաթ
տր.	օրվա	ամռովա	իրիզվա	շափաթվա
բաց.	օրվանից	ամռովանից	իրիզվանից	շափաթվանից
գործ.	օրվանով	ամռովանով	իրիզվանով	շափաթվանով

Բացառականի ձևերին զուգահեռ, նույնիսկ ավելի հաճախ գործածվում են՝ օրվանէ, ամսըվանէ, իրիզվանէ և շափաթըվանէ ձևերը:

Սա, ինչպես ժամանակակից գրական հայերենում, ժամանակ նշանակող բառերի հոլովումն է: Հոգնակի թիվ ունեցող բառերի այդ ձևերը ի հոլովման են պատկանում:

Այս հոլովման բառերի ցանկը հետևյալն է.

- օր > օր-օրվա,
- ամիս > ամիս-ամսըվա,
- աշուն > աշունք-աշունքվա/աջնան,
- գարուն > գ'արունք-գ'արունքվա/գ'առնան,
- երեկոյ > իրիզուն-իրիզվա,
- հերո > հերու-հերվա, (Քյազ.) խէր-խէրվա,
- ձմեռ > ձ'ըմեռ-ձըմըրվա,
- ամառ > ամառ-ամըրվա,
- շաքաթ > շափաթ-շափաթըվա,
- տարի > տարի-տարվա,
- ցերեկ > ցերեզ-ցերեզվա,
- գիշեր > քըշեր--քըշերվա.
- ժամ > սըհաթ-սաթվա (փոխ. պարսկ.) և այլն:

Ժամանակ նշանակող բառերից միակ բացառությունը դադա «րոպե» բառն է, որը պարսկական փոխառություն է (պարսկերենը իր հերթին փոխ է առել արաբերենից): Սա ի հոլովման է պատկանում:

### Չորրորդ հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են՝ տր. -ան, բաց. -ից, գործ. -ով: Հոլովման պատկերը հետևյալն է.

նող.	դ' ուո	շուհ	նուո
տր.	դ' ըոան	շան	նրոան նրոի
բաց.	դ' ոհից	շհից	նրոից
գործ.	դ' ըոնօվ	շնօվ	նրոօվ

Այս հոլովման են պատկանում դ' ուո-դ' ըոան, նուո-նրոան (նաև նրոի), ձ' ուվ-ձ' ըվան, տուհ-տան, շուհ-շան, սուհ-սան, գարուհք-գարոհան, աշուհք-աշուհան բառերը:

Սա կենսաբանական հոլովում չէ և տեղը զիջում է ի հոլովումին: Վերոհիշյալ բառերի հոգնակին ևս ի հոլովման է պատկանում:

### Հիմգերորդ հոլովում

Հիմգերորդ հոլովման մեջ տրականի ձևը կազմվում է ներքին թեքմամբ՝ ուղղականի վերջին ձայնավորը օ-ի վերածելով: Բացառական և գործիական հոլովանները կազմվում են տրականից՝ սովորական -ից և -օվ վերջավորություններով. ինչպես՝

ուղ.	հեր(խեր)	ախպեր	մեր	տեքըր
տր.	հօր(խօր)	ախպօր	մօր	տեքօր
բաց.	հօրից(խօրից)	ախպօրից	մօրից	տեքօրից
գործ.	հօրօվ(խօրօվ)	ախպօրով	մօրօվ	տեքօրօվ

Խոսվածքներում աճեր և հրճվեր բառերը -ի հոլովման են պատկանում:

Ք չր > քուր բառը հոլովվում է հետևյալ ձևով. քուր-քըվո՞ր-քըվո՞րից-քըվո՞րօվ:

Հեր և մեր բառերի հավաքական գոյականը կազմվում է -անք մասնիկով, հոգնակին՝ -եր հոգնակերտ վ: Ախպեր, տեքըր և քուր բառերի հոգնակին -տանք մասնիկով է կազմվում, թեև ու գ և կան համապատասխանաբար ներ և եր մասնիկներով ձևեր:

Կյէրար բառը հոլովվում է ի հոլովմամբ, կա հավաքական կյէրանք ձևը. որը հոլովվում է՝ կյէրանք, կյէրանց, կյէրանցից և կյէրանցօվ:

### Վեցերորդ հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են՝ տրական -նչ, բացառական -նչից, գործիական -նչօվ. ինչպես՝

ուղ.	տեր	կյիսուր
տր.	տիրո՞նչ	կյիսրո՞նչ
բաց.	տիրո՞նչից	կյիսրո՞նչից
գործ.	տիրո՞նչօվ	կյիսրո՞նչօվ

Տեր բառի հոգնակին -եր ով է կազմվում, կյիսուր բառինը՝ ներ-ով: Այդ հոգնակի ձևերը ի հոլովման են պատկանում:

Այս հոլովմամբ ուրիշ բառ չի հոլովվում:

### Յոթերորդ հոլովում

Սա միայն հոգնակի հոլովում է: Ուղղական հոլովն ունենում է -տանք (ախպրտանք, տեքերտանք, քըվո՞րտանք), -անք (հերանք/խերանք, աճերանք, կյէրանք), -ենք (Մատուրենք, Սիմոնենք), -ննք (խընամոնք), -ք (գ'յեղէցիք), տրականը -ց, -տանց, -անց, -ենց, ոնց, բացառականը -ից, գործիականը -օվ վերջավորություններ, որոնք դրվում են տրականի ձևերի վրա. ինչպես՝

ուղ.	ախպրտանք	կյէրանք	խնամոնք	Մատուրենք
տր.	ախպրտանց	կյէրանց	խնամոնց	Մատուրենց
բաց.	ախպրտանցից	կ'յէրանցից	խնամոնցից	Մատուրենցից
գործ.	ախպրտանցօվ	կյէրանցօվ	խնամոնցօվ	Մատուրենցօվ

ուղ.	գ'յեղէցիք
տր.	գ'յեղէցոնց
բաց.	գ'յեղէցոնցից
գործ.	գ'յեղէցոնցօվ

Ք-ով վերջավորվող մի շարք հոգնակի բառեր ենթարկվում են նաև ի հոլովման:

## Անկանոն հոլովում

Այսպես ենք անվանում կիճ բառի հոլովական ասանձնահատուկ ձևը: Բուրվարի և Գափա գավառներում այն ունի հետևյալ պատկերը՝

ուղղ.	կնիկ	կընանիք
տր.	կընգա(ն)	կընանիքի
բաց.	կընգանից	կընանիքից
գրծ.	կընգանով	կընանիքով

Քյազազում և Քյամարայում եզակին մնում է նույնը, իսկ հոգնակին հոլովվում է այսպես՝ կընթիք, կընթիքի, կընթիքից և կընթիքով: Վերջին երկու ձևերին զուգահեռ գործածական են նաև Բուրվարիում գործածվող ձևերը:

Ամբողջ տարածքում քոյր>քուր բառը հոլովվում է հետևյալ ձևերով. քուր, քըվոր, քըվորից, քըվորով:

### Հնչյունափոխությունը հոլովման ժամանակ

Հոլովման ժամանակ հնչյունափոխությունը տարածված երևույթ է, կանոնները մոտավորապես այնպիսին են, ինչ հոգնակիի կազմության ժամանակ:

ա) Միավանկ բառերի փակ վանկի ի և ու ձայնավորները սովորաբար վերածվում են ը-ի. օրինակ՝ գիր>գիր-գրի, սիրտ>սիրտ-սրտի, միս>միս-մսի, լուծ>լուծ-լրծի, թուղթ>թուխտ-թըխտի, ջուր>ջուր-ջրի, սուտ>սուտ-սրտի և այլն:

Մյուս ձայնավորները չեն հնչյունափոխվում, օրինակ՝ բան>բան-բանի, գիղ>գյղ-գյղի, գող>գող-գողի, դաս>դաս-դասի, թոռն>թոռ-թոռի և այլն:

Է ձայնավորի հնչյունափոխությունն ունենք մի քանի բառերում. էշ>էշ-իշու, այծ>էծ-իծու, գայլ>գյլ-գյիլու, մէջ>մէջ-միջի, մեջք>մէջկ-միջկի, տէր>տէր-տիրո՞նչ:

բ) Բազմավանկ բառերի փակ վերջնավանկի ի և ու ձայնավորները սովորաբար վերածվում են ը-ի կամ սղվում են, ինչպես՝ ալիւր>ալուր-ալըրի, աղբիւր>ախալուր-ախալըրի, բանալի>բանիք-բալըրքի, եղունգ>ըղունգ-ըղընգի, կամուրջ>կարմունջ-կարմընջի, կըրունկ>կըրունգ-կըրընգի, գլուխ>գլուխ-գլուխի և այլն:

Բառավերջի փակ վանկի մյուս ձայնավորները, որպես կանոն, չեն հնչյունափոխվում. օրինակ՝ դմակ>դ՛ըմակ-դ՛ըմակի, կաքաւ>կաքավ-կաքավի, խաղող>հաղող-հաղող/խաղող-խաղողի, խնձոր>խընձոր-խընձորի և այլն:

Ինչպես հոգնակիի կազմության ժամանակ է, երկվանկ բառերի երկրորդ վանկի ա ձայնավորը հոլովման ժամանակ ևս զրկվելով շեշտից՝ կարող է վերածվել ը-ի կամ սղվել, օրինակ՝ ճակատ>ճակատ-ճակրտի, շալակ>շըլակ-շըլկի, ջրաղաց>ջրաղաց-ջ՛աղցի և այլն:

### Որոշյալ և անորոշ հոդեր

Որոշյալ հոդերն են ը և -ն: Արդի հայերենի օրինակով ձայնավորով վերջավորվող բառերն ստանում են -ն հոդը, իսկ բաղաձայնով վերջավորվողները՝ ը: Օրինակներ են՝ քերան>ք՛երան-ք՛երանը, ձի>ձի-ձին և այլն:

-Ն հոդից առաջ ա ձայնավորը դառնում է է, հանդես բերելով այ>է հնչյունափոխությունը (փեսայն>փեսէն), օրինակ՝ տղայ>տըղա-տըղէն, գուրպայ>գուքա-գուքէն/ գ՛ուպա- գ՛ուպէն (Քյազազ) և այլն:

Խոսվածքներիս անորոշ հոդն է մէ, որն իր կիրառմամբ չի տարբերվում արդի հայերենի մի անորոշ հոդից. օրինակ՝ մէ մառք մէ օր մէ տուն մըտապ:

Պետք է նշել, որ մեկ թվականը թվարկելու ժամանակ արտասանվում է մէկ, օրինակ մէկ, տասնըմէկ քառսունըմէկ և այլն, իսկ կապակցված խոսքի մեջ մէ. օրինակ՝ մէ թուման փող ունեմ, քրահըմէ օր ա ինչ էկել ենք, և այլն:

А. Т. СИМОНЯН — Особенности существительного в армянских говорах Центрального Ирана.— Вследствие насильственного переселения Шах-Аббасом армян из Армении в центральные районы Ирана в 1604 г. здесь образовались компактные армянские поселения. В статье представлены материалы исследования особенностей армянских говоров этого ареала.